ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՀՐԱԶԴԱՆԻ Պ.ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ №8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ինդեքս 2301թ. Հրազդան, Կենտրոն թաղ. 54 հեռ. /0223/2-59-07,( E –mail) hrazdan8@schools.am

« ԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆ» Ա/ Ձ-Ի

ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գևորգյան

ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի Պ.Սևակի անվան N8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Անուշ Գևորգյան» Ա/ Ձ-ի /այսուհետ Պայմանագրի կողմ/ 2025թ փետրվարի 4-ին կնքվել է «ԿՄ-Հ8ՀԴ-ՄԱ-ԾՁԲ-25/03» ծածկագրով պայմանագիր /այսուհետ Պայմանագիր/, համաձայն որի՝ Պայմանագրի կողմը ստանձնել է պայքար կրծողների դեմ /դեռատիզացիայի/ ծառայություն մատուցում/այսուհետ՝ Ծառայություն/՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրի կողմը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուինին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված՝ Ծառայությունը Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցին համապատասխան:

Սակայն Պայմանագրի կողմը Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով սահմանված ժամկետները չեն պահպանվել, այն մատուցվել է մինչև հունիս ամիսը ներառյալ, որից հետո սույն թվականի հուլիսի 31-ին ստացվել է գրություն << Անուշ Գևորգյան >> Ա/Ձ-ն լուծարվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների

թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պայմանագրի կողմը էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ Ծառայության մատուցման ժամկետները խախտվել են :

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Պատվիրատուն սույն թվականի օգոստոսի 11 -ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրենի պարտականությունները կատարող Ս. Գնորգյան